ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

02.08.2016 16:10

Օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանն ընդունել է պալատի վարչական շենքի մոտ դերասանուհի Թամարա Հովհաննիսյանի գլխավորությամբ հավաքված քաղաքացիներին:

Հավաքի կազմակերպիչ Թամարա Հովհաննիսյանի ներկայացմամբ՝ դեպի Փաստաբանների պալատ երթը կրում էր հուլիսի 17-ի դեպքերից հետո ազատազրկման վայրերում գտնվողների իրավունքների պաշտպանության հարցում փաստաբաններին քաղաքացիական աջակցություն ցուցաբերելու նպատակ:

Պալատի Մեծ դահլիճում ողջունելով ներկաներին՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը տեղեկացրել է, որ մեծաթիվ փաստաբաններ են ներգրավված վերջին իրադարձությունների հետ կապված քրեական գործերով և միայն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն է ցույց տրվում 45 անձանց:

Երթի մասնակիցները Պալատի նախագահին և հանդիպմանը ներկա փաստաբաններին ներկայացրել են իրենց մտահոգությունները ազատազրկվածների պահման վայրերի, առողջական խնդիրների, տարրական իրավունքների խախտումների վերաբերյալ: Թամարա Հովհաննիսյանը հրապարակել է երթի նպատակին առնչվող հայտարարությունը՝ խնդրելով ներկա փաստաբաններին թարմ տեղեկություններ հաղորդել իրենց պաշտպանյալների վերաբերյալ: Փաստաբան Ինեսսա Պետրոսյանը, Գիվի Հովհաննիսյանը, Հարություն Բաղդասարյանը մանրամասնել են ազատազրկվածներ Պավլիկ, Արամ Մանուկյանների, Արմեն Մարտիրոսյանի առողջական վիճակին և վարույթն իրականացնող մարմինների գործունեությանն առնչվող որոշ հարցեր:

Երթին միացած ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Կարեն Անդրեասյանը, նշելով, որ ներկա է որպես մտահոգ քաղաքացի, առաջարկել է Պալատի նախագահին փաստաբանների և քաղաքացիների համատեղ խորհուրդ ձևավորել իրավապաշտպան գործունեության հետագա խոչընդոտներին, խախտումներին արձագանքելու նպատակով: Խորհրդի ստեղծման նպատակահարմարությունը նա պատճառաբանել է Հայաստանից, Սփյուռքից բազմաթիվ քաղաքացիների կողմից ցուցաբերած մեծ հետաքրքրությամբ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, հիշեցրել է փաստաբանի՝ մասնագիտական գործունեություն իրականացնելիս անկախության մասին՝ հավելելով, որ փաստաբանն առաջնորդվում է օրենքով և չի վերահսկվում պալատի կողմից:

Պալատի նախագահը նկատել է, որ արդարադատության համակարգին կարող է կաշկանդել հասարակական վերահսկողությունը, և առաջարկել է պայմաններով ապահովել այդպիսի խորհուրդ ստեղծելու ցանկություն ունեցող փաստաբաններին: Կազմակերպչական հարցերը ապահովելու համար լիազորվել է փաստաբան, փաստաբանների իրավունքների պաշտպանության խորհրդի համակարգող Կարեն Մեժլումյանը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })